

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ ԵՐԷԿ ԱՆԱԿՆԿԱԼ ԿԵՐՊՈՎ ՎԵՐՋՆԱԳԻՐ ՏՈՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ, ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԵՐՋՆԱԳՐԻ ՄԵՐԺՈՒԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ՝ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՈՒԺԵՐ ԶԱՄԱՔ ՊԻՏԻ ՀԱՆՈՒՆ ԵԳԻՊՏՈՍ, ՍՈՒԷՉԻ ԶՐԱՆՑՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՍՐԱՅԷԼ ԸՆԴՈՒՆԵՑ, ԻՍԿ ԵԳԻՊՏՈՍ ՄԵՐԺԵՑ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՕՐԱՇԱՐԺ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ - ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՉԱՓԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԹԵԼԱԴՐԵՆ - ՍՈՎԻԵՏԱԿԱՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԷԼԻ

ԼՈՏՏՈՆ.— Երէկ, մինչ Եգիպտական հողի վրայ կատարվող կրակոց տեղի կ'ունենային Իսրայէլի եւ Եգիպտոսի ուժերուն միջև, օդային զօրով Փարիզէն Հնամե ժամանեցին Ֆրանսայի վարչապետ պ. Մոլլէ եւ արտաքին գործոց նախարար պ. Փիլիպ: Անոնք անմիջապէս խորհրդակցելի սկսան պ. պ. Իսրընի եւ Լոյսի հետ, Միջին Արեւելքի եւ մասնաւորաբար Սուէզի ջրանցքի շրջանին մէջ ստեղծուած կացութեան շուրջ: Այս խորհրդակցութեանց ընթացքին որոշուեցաւ վերջնապիւր ուղղել Իսրայէլի եւ Եգիպտոսի, որպէսզի 12 ժամէն դադարեցնեն թըշնամութիւնները: Որոշուեցաւ նաեւ, վերջնապիւր մերժուելու պարագային, անգլիական եւ ֆրանսական մեծ ուժեր ցամաք հանել Եգիպտոս, Սուէզի ջրանցքի ազատ նաւարկութիւնը պաշտպանելու համար:

Իսրայէլի եւ Եգիպտոսի Լոնտոնի դեսպանները, առանձինն առանձինն հրաւիրուեցան արտաքին գործոց նախարարութիւն, ուր վերջնապիւր տրուեցաւ իրենց: Մանուցադրին մէջ կ'ընտրի թէ՛ ծանուցադրի մերժուելու պարագային, անգլիական ֆրանսական ուժերը պիտի զբաւեն Իսրայէլիան, Սուէզը եւ Փարթ Սայիւրը: Եգիպտոսի տրուած ծանուցադրին մէջ կ'ըսուի թէ՛ անգլիական ֆրանսական ուժերը կը պահանջեն որ, իրենց առժամաբար թոյլ տրուի զբաւելի ուղղակիական վերոյիշեալ երեք գիւղերը, հակառակորդ կողմերը իրարմէ բաժնելու համար: Մանուցադրը 12 ժամ պայմանաւոր կուտայ երկու կողմերուն: Պայմանաւորութիւնը վերջնայ Զորքաբարձի առաւել ժամը թին:

Նիւ ԵՈՐԿ.— ՄԱԿի մօտ Միացեալ Նահանգներու ներկայացուցիչի զիմուսին վրայ, Ապահ. Պորտուգալը ըստանձնել իր պատասխանատուութիւնները: Սովիէթ Միութեան ներկայացուցիչը ամբաստանեց Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսան, ըսելով թէ այս դէպքերը ստեղծեցին՝ որպէսզի միջամտեն Միջին Արեւելքի մէջ: Պահանջեց որ Իսրայէլի հրահանգով անմիջապէս դադարեցնել զործողութիւնները: Նմանապէս պահանջեց ազդարարել միւս երկիրներուն եւ յատկապէս Ֆրանսայի եւ Անգլիոյ, որպէսզի չըմիջամտեն:

Եգիպտոսի ներկայացուցիչը ամբաստանեց Իսրայէլը եւ պահանջեց որ ընդհ. ժողովը ՄԱԿէն արտաքին Իսրայէլի: Իսրայէլի ներկայացուցիչը ըսաւ թէ աւելի վերջ պիտի խօսի: Մեծն Բրիտանիան եւ Արեւելքի վերջ պիտի խօսի: Մեծն Բրիտանիան եւ Արեւելքի վերջ պիտի խօսի: Մեծն Բրիտանիան եւ Արեւելքի վերջ պիտի խօսի:

Ազգերը տակաւին կարծիք չեն յայտնած այս հարցի մասին: Պ. Գեյնթը պահանջեց որ, որեւէ քայլ չառնուի մինչեւ Ապահ. Պորտուգալի որոշումը հրատարակուի: Վարչապետը պատասխանեց թէ՛ զօրախտարար, այդպիսի յանձնառութիւն չի կրնար ստանձնել:

Պորտուգալը երկար ու փոթորկալի վիճարանութիւններէ վերջ 218ի դէմ 270 քուէով վաւերացուց անգլիական ֆրանսական վերջնապիւր:

ՆԱԽԱԳԱՅ ԱՅՁԸՆՀԱՌԵՐԻ ՊԱՏԿԱՄԱԳԻՐԸ
ՈՒՆԵՆԿԹՅՈՒՆ.— Նախագահ Այզենհաւը, Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի վարչապետներուն, պ. պ. Իսրընի եւ Մոլլէի ուղղեց զիր մը, որով անոնց կը թելադրէ Միջին Արեւելքի մէջ ստեղծուած տագնապին մէջ բռնելու թէ՛ գործածութեան չդիմել:

Նախագահը իր գիրին մէջ կ'ըսէ թէ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը տակաւին այն համոզումն ունի թէ՛ կարելի է խաղաղ միջոցներով, օրինակ Ապահ. Պորտուգալի մէջ

Նմանապէս կը պահանջէր որ, ՄԱԿի անդամ պետութիւնները խուսափին այդ շրջանին մէջ սպառնալիքի եւ բռնի ուժի գործածութեան զիմելու եւ Իսրայէլի որեւէ օժանդակութիւն ընծայելու, եթէ չենթարկուի Ապահ. Պորտուգալի որոշման:

Տրամաթիկ եւ փոթորկալի վիճարանութիւն տեղի ունեցաւ անգլիացի եւ ամերիկացի ներկայացուցիչներուն միջև: Անգլիացի ներկայացուցիչը պահանջեց որ, այդ առաջարկը ետ առնել: Սովիէթ ներկայացուցիչը արտայայտուեցաւ ի նպաստ ամերիկեան առաջարկին:

Եգիպտոսի ներկայացուցիչը պահանջեց որ, Պորտուգալը քննէ Անգլիոյ եւ Ֆրանսայի կողմէ իր երկրին ուղղուած վերջնապիւր անթիւ Եգիպտոսի կատարած զիմումը: Սակայն ներկայացուցիչը խիստ կերպով արտայայտուեցաւ Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ:

Առաջարկը քուէարկութեան դրուեցաւ: Պելճիքա եւ Աւրստրալիա ձեռնպահ մնացին: Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսան վէթոյի իրենց իրաւունքը զորածեցին: Ամերիկեան առաջարկը 7 քուէ ստացաւ:

ՊԱՌԱԿՏՈՒՄԸ ՔԱԶԱԼԵՐՈՂՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ժողովրդավար երկիրներու մէջ շատ բնական է եւ արհեստական, որ ընտրութիւններու ընթացքին զոյտութիւն ունենան մեծամասնութիւն մը եւ փոքրամասնութիւն մը:

Այսպէս՝ հայ զաղութներու կեանքին մէջ, մեր ազգային աւանգուստներու եւ զոյտութիւն ունեցող կազմական կանոնադրութիւններուն համաձայն, տեղի կ'ունենան ընտրութիւններ:

Երբ ընտրութիւն կատարելու հարց կայ, անպայման շահող մը եւ կորսնցնող մը պիտի ըլլան:

Անցեալ տարի Փարիզի մէջ եկեղեցիի հոգաբարձութեան, իսկ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ թեմական ընտրութիւններ կատարուեցան: Դաշնակցութիւնը եւ իր բարեկամները կորսնցուցին: Հազիւ ամիս մը տեւեցին՝ այդ ընտրութիւններու ընթացքին գործուած ասօրհինութեանց դէմ յայտնուած բողոքներն ու քննադատութիւնները: Ի վերջոյ համակերպեցանք կատարուած փաստին:

Այս վերաբերումը ունեցան մեր ընկերներն ու բարեկամները, որովհետեւ կ'անգրադառնային, թէ ներքին օտարակրճութիւններ, պայքարներ կըրնան հասնիլ կէտի մը, ուր այլեւս հաւաքական շահերը ստուգապէս կը վտանգուին: Ազգային մտահոգութիւններէ առաջնորդուած կազմակերպութիւն մը անհնար է, որ կարենայ ըսել ստար երկրի մը մէջ:

Միեւնի ծայր պիտի երթանք: Այսպէս յայտարարեց կիրառանքի մէջ ՌԱԿԻ բանաստեղծ քարոզիչը, որ Խ. Հայաստանէն վերադարձաւ վերակառուցուած, «յստաջրիմական» զաղափարներով:

Միեւնի ծայր պիտի երթանք, յայտարարելէ ետք, նոյն ոգիով գործի լծուեցան ու «Համախմբում», պիտակին տակ պատակոյն շարժումի մը զուրիւր անցան առանձին եկեղեցի, առանձին դպրեմանք, առանձին Տեղապահ եւ առանձին Կաթողիկոս ունենալու համար:

Հով ցանողը փոթորիկ կը հնձէ, կ'ըսէ ժողովրդական առածով:

ՌԱԿԻ օրգանը կը ներկայացնէ պատկերազարդ պատմութիւն մը, մեծադիմիկ խորագիրներու տակ, թէ ինչպէս Պրիֆայայի վանքէն դուրս քշուեցան բժրոտտ միաբանները, ոստիկանութեան միջոցով...: Եւ ինչ որքանքական ձեւով կը տրուի օրինական պարզ ձեւակերպութիւն մը, զորմաղբուած՝ ազատ Լիբանանի օրինապահ իշխանութեանց կողմէ՝ վանքին բանալիները առնելով կը յանձնուին Կիլիկիոյ վեհափառ Կաթողիկոսին:

Խ. Հայաստանի մէջ քանի՞ եկեղեցիներ մթերանոցի վերածուեցան (կարգալի Դերենիկ եպիս. Փոյատեանի նոր լոյս ընծայած գիրքը...), բայց ՌԱԿԻ օրգանը երբեք չմտածեց երկու տող բողոք արձանագրել: Ինչ որ ըրաւ Չեկան, քաջալերեցին

ու ծափահարեցին տարիներէ ի վեր:

Առանց ամչնալու, խպնելու եւ առանց ծիծաղելի դառնալու վախը ունենալու, ՌԱԿԻ թերթերը ազատ Լիբանանի արդարութեան պաշտօնեաները կը ներկայացնեն այնպէս, որքան թէ խորհրդային բռնակալութեան ոտնաճաղով չեկրտնեցր ըլլային:

Պարտութեանէ պարտութիւն դիմելով՝ իրենց գլուխը քարին պիտի գարնեն ՌԱԿԻ մարդիկը, եթէ չըմբռնեն հետեւեալ տարրական ու պայծառ ճշմարտութիւնը:—

Որեւէ երկիր, նաեւ արարական պետութիւնները չեն փափաքիր, որ իրենց սահմաններուն մէջ ընակող փոքրամասնութիւններ, ստար համայնքներ դուրսէն կառավարուին:

Այդ մտահոգութեան արդիւնքն է Սուրիոյ չքաջալերեցին էջմիածնի անունով կատարուած միջամտութիւնները, ինչ նպատակով ալ ըլլային անոնք:

Արդ, անելի խորացնելով հարցին քննութիւնը, ճշգրտեթէ՛ որո՞նք շահագրգռուած են եւ կը քաջալերեն պատակուումը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սահմաններուն մէջ:

Նախ՝ ներքին ճակատի վերայ՝ կարգ մը եպիսկոպոսներ, որոնք թեկնածու էին կաթողիկոսութեան, իսկ աշխարհականներէն քանի մը մեծամիտներ, որոնք Լիբանանի պետական խորհրդարանին մէջ պիտի ուզէին բազմիլ: Վերջապէս ՌԱԿԻ եւ Բարեգործականը, որոնք միշտ կարծիք են, թէ մեր հանրային կեանքին մէջ առանց իրենց տերբու չի շարժիր...:

Բայց անելի հետաքրքրականն ու խորհրդածիլին արտաքին ազդակն է, որ «եւապիստան» զանազան նպատակներ կը հետապնդէ եւ որ միայն պատակուումով օգուտ մը կրնայ ապահովել իրեն: Ան պիտի չըփափաքէր, որ «յստաջրիմական» տարբեր տկարանայ եւ այդ մտահոգութեան արդիւնքը արագութեամբ նորընտիւր վազգէն Կաթողիկոսը բերաւ Լիբանան: Դիպեք բու շարունակութիւնը ծանօթ է:

Մենք բոլորովին համոզուած ենք, որ այդ արտաքին ազդակը միշտ պատակուում պիտի սերմանէ հոն, ուր իր ձեռքը կը հասնի եւ անհնար է, որ անոր ընկերային համոզումները, քաղաքական շահերը զուգահեռ ընթանան հայ ազգային նպատակներուն հետ:

Սակայն եւ այնպէս Լիբանանի եւ Սուրիոյ պետութիւնները, իրենց շահերէն առաջնորդուելով, երբեք թոյլ պիտի չտան, որ հայ զաղութը պատակուումի եւ զօրանայ ստար ազգեցութիւնը:

Նման մտահոգութիւններ կրնան չունենալ Փարիզ, Լոնտոն եւ Ուաշինգթըն, որոնք որոշապէս քաջալերեցին ու կը շարունակեն քաջալերել իրենց ներկայի հայ զաղութներու կապը էջմիածնի հետ: 1945ի

եւ 1955ի կաթողիկոսական ընտրութիւններուն մասնաւորապէս անդրեւսաքան ազգեցութիւններու տակ զտնուած հայ վարդապետներ, եպիսկոպոսներ բարատիկ վիզէներով արտօնուեցան երթալ Խ. Հայաստան: Թատկանչական է, որ Սուրիոյ, Լիբանանի, Իրաքի, Յորդանանի, Իրանի հայ զաղութներէն ո՛չ եկեղեցական ու ո՛չ ալ աշխարհական պատգամաւորներ մասնակցեցան Վազգէն Կաթողիկոսի ընտրութեան: Մինչդեռ Լոնտոնի, Փարիզի, Նիւ Եորքի եւ Ֆրեզնոյի եպիսկոպոսական շրջախումբը, աշխարհական պատգամաւորներով միասին, ցուցական մասնակցութիւն մը ունեցաւ:

Ինչո՞ւ այս տարբերութիւնը: Արեւմտեան մեծ պետութիւնները, Մոսկուայի հետ բարեկամական յարաբերութիւններ մը չակնելու ատեն, այնքան ալ մտահոգուած չեն իրենց սահմաններուն մէջ զտնուած հայ համայնքներու գործերով:

Պարագան նոյնը չէ արարական երկիրներու եւ Իրանի մէջ, ուր հայ զաղութները թիւով ու որակով կշիռ մը կը ներկայացնեն: Այս պետութիւնները զգայուն են թոյլ յտալու համար, որ արտաքին որեւէ ուժ թափանցէ հայ համայնքներուն մէջ:

Այսպէս՝ խորհրդային իշխանութիւնը ուղղակի կը քաջալերէ պատակուումը հայ եկեղեցական կեանքին մէջ: Նորագոյն փաստը, որ կոյրերուն աչքըն ալ կրնայ բանալ, Եղիշէ Տէրտերեանի քարոզն է Երեւանի ձայնասփիւռնէն...:

Բայց իրենց անտարբերութեամբ եւ այլազան նկատումներով՝ արեւմտեան պետութիւնները եւս թոյլ կուտան խորհրդային մարտոց քարոզչութիւնը հայ զաղութներուն մէջ:

Պէլյուքի անկուսակցական «Այգ» օրաթերթը (24 Օգոստ. 1956), մեր ակնարկած քաղաքականութեան առնչութեամբ, ցնցող մերկացումներ ըրաւ՝ յայտարարելով.

«Ո՛վ արդեօք կանաչ տալուցնրու սրցակներու փոխարէն կը դասաւանդէ Պէյուքի Ամերիկեան համալսարանին մէջ...»

«...Ո՛վ արդեօք հաբասացած է ամերիկեան վաճառանիւծով ստանաւաններու եւ պայմանադրեալ օդի մեքենաներու ներկայացուցչութեամբ...»

«...Ո՛վ արդեօք իր ֆակը լեցուցած է Ֆրանսեպիլիմիական ոսկիներով...»:

Այսպէս՝ ակնարկութիւններու երկար շարք մը թուած էր «Այգ»: Լիբանանի մէջ բոլորին ծանօթ են այդ «կեղտոտ բուրձուանները, որոնք երկու շարժ վրայ կը խաղան...»:

Կասկած չկայ, որ երկու շարժ վրայ խաղացող կարգ մը եպիսկոպոսներ եւ փրոֆ.ներ, քանի մը զբաղմունքներ տարբեր անկրկներէլ գիտուած՝ շահեր կ'ապահովեն Խ. Միութեան եւ Արեւմտեանի մեծ պետութիւն-

ԳՐԱԳԵՏ Կոստան Զարեան որ ներկայիս կը գտնուի Վիեննա, աւարտած է մեծ դիւցազնագրութիւն մը (արձակ եւ չարձակ), զոր առ այժմ հրատարակելու նպատակ չունի: Գործին մէջ մեր բոլոր դիւցազնագրութիւնները տրուած են անհաւասարելի արուեստով:

ՊԱՇՏԱԿԱՆՈՐ Բաֆֆի Պետրոսեան Պոլսոյ մէջ երկու նուագահանդէս տալէ վերջ, օդային գծով՝ տիկնոջը հետ մեկնած է Թեհրան: Բաֆֆի Պետրոսեան այս շրջապոստի ընթացքին պիտի այցելէ նաեւ Սուվիթ Միութիւն, ուր յաջորդաբար նուագահանդէսներ պիտի տայ Երեւանի, Քիֆիզի, Պաղուի, Ռոսթով-Տոնի, Մոսկուայի եւ Լենինկրատի մէջ:

Բաֆֆի, Մոսկուայի մէջ պիտի նուագէ Արամ Սաչատուրեանի դաշնակի հոշակաւոր քունչերթն, ընկերակցութեամբ նուագախումբի՝ զոր անձամբ պիտի վարէ անուանի հեղինակը: Բաֆֆի, այս շրջապոստի ընթացքին ընդամենը 64 նուագահանդէսներ պիտի տայ զանազան երկիրներու մէջ:

ՎԱՍՏԱԿԱՆՈՐ ուսուցչապետ Ծահան Պերպլեբեանի ազգային յուզարկաւորութիւնը տեղի ունեցած է Հոկտեմբեր 13ին, Փարիզի Յովհաննէս Մկրտիչ եկեղեցոյ մէջ, նախագահութեամբ Սերոբէ եպիսկ. Մանուկեանի: Ներկայ եղած են նաեւ Ջղաճեան վրդ. եւ 5 քահանաներ: Իպրաց դասը իր ամբողջ կազմով մասնակցած է արարողութեան, ընկերակցութեամբ երգեհոնի, զոր նուագած է պ. Արա Պարթեւեան: «Տէր Ողորմեան» մեներգած է օր. Լիւսի Աճէմեան:

Արարողութիւններէն վերջ, Առաջնորդը յուզիչ դամբանական մը խօսած է Ռեթէոս Պէր-

ներուն հաւատարապէս:

Միայն տան տէրն է, որ դէմ է պատակուումին. նախ հայ ժողովուրդը, որ զիտակ է իր ազգային միութեան արժէքին, երկրորդ՝ Իրան եւ ընդհանրապէս արաբական պետութիւնները կ'ուզեն, որ խաղաղ ապրի մեր տարազիր բազմութիւնը եւ գերծ մնայ արտաքին ազգեցութիւններէ:

Այս պատճառով ալ միշտ պիտի ձախողին պատակուումի փորձերը Միջին Արեւելքի հայ զաղութներուն մէջ: Կատարելապէս ներդաշնակ են հայկական մտահոգութիւնները տրուելու արաբական պետութիւններու շահերուն:

Անթիլիասէն ետք, անպայման պիտի մաքրագործուի Հայ Երուսաղէմը: Իսկ պատակուում հետապնդող հայ եկեղեցականներ եթէ տրամադրութիւն չունին խորհրդային ջրախտ երթալու, պատրաստ պաշտօններ իրենց կը սպասեն Ֆրանսայի, Մեծն Բրիտանիոյ կամ Հիւս. Ամերիկայի մէջ: Պատակուումները տեղ պիտի չունենան Միջին Արեւելքի մէջ:

պէրեանի «Դաստիարակի մը խօսքեր» հատրէն՝ իբր բնական ընտրելով «Փառս Բեգ ով դպրոց.— Լուսոյ վառարան,— Ուր կապարն յոսկի,— Նիւրի հոգի դառնան»:

Յետոյ պատմած է իր մտերմութիւնը Ծահանի հետ, Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանէն եւ զոված անոր ուսուցչական արժանիքները, թե յաղրած է իր շիշատակը յաւերժացնել Պերպլեբեան վարժարան մը վերաբանալով Երուսաղէմի մէջ: Այս առթիւ ըսած է թէ՛ միշտ կ'արժարձէր վարժարանին վերաբացման խնդիրը եւ խնդրած էր իրմէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին միջոցաւ դիմում կատարել Գիւլպէնկեան խնամակալութեան, կտակէն բաժին մը ստանալու համար:

Յետոյ խօսք առած է Պէրպլեբեան վարժարանի Սաներու կողմէ պ. Վրոյր Հայկչեան: Նկարագրած է թէ հանդուցեալը ինչպէս բարեգրած է վարժարանին ընդհանուր վիճակը:

Պ. Հրանտ Սամուէլ խօսած է հայ մտաւորականներու կողմէ եւ հաստատած՝ թէ ինչպիսի գոհողութիւններով Ռեթէոս Պէրպլեբեան եւ որդիք՝ Օննիկ եւ Ծահան Պէրպլեբեան իբրեւ դաստիարակ ուսուցիչ բարբառ զի մը կատարած են: Պ. Մ. Պարսամեան կարգացած է յուզիչ դամբանական մը՝ յանուն եկեղեցոյ կրթ. Մարմնին եւ Փարիզահայ ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու: Գրաւոր յարգանք յայտնած է նաեւ պ. Աբրաւմեան:

Մարկեպոսկանը ղրկած են Պերպլեբեանի նախկին սաները, Հ. Բ. Ը. Միութիւնը, այրի տիկին Քիլի Ծահան Պերպլեբեան եւ եղբայրները:

Ողբ. դաստիարակին մարմինը ամփոփուած է Պանէէոյի գերեզմանատան հայ մտաւորականներու յատկացուած դամբարանին մէջ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ «Ուորլոս Ամուսթիք Ռեպլիկ» Օգոստոսի թիւին մէջ կը կարդանք:—

Քսան տարի առաջ: Հայ տղան մը, օր մը սկսաւ քակել իր հօրը նուիրած աքորտոնը: Այսօր այդ երիտասարդը, որ Զօհրայ Պ. Արբանածեան կը կոչուի, 36 տարու է եւ «Փոքրիկ ձենիկոն» կը կոչուի:

Նորոգութեանց իր պզտիկ խանութը իր տեսակին մէջ միակն է Խթանալուի մէջ: Երիտասարդը իր մեծնայէն վերջ երգապնակներ կը ձայնէր խանութի մը մէջ, պարապոյ ժամերուն շատ կը սիրէր քակել երաժշտական գործիքներ, տեսնելու համար թէ ինչպէս շինուած են անոնք:

Յետոյ մտաւ դաշնակի նորոգութեանց եւ «Աքորտի հաստատութիւնը»:

Անելի վերջ, սկսաւ աքորտոններ նորոգելու: Վերջապէս անցեալ տարի սկսաւ իր սեփական գործին, իբր աքորտէն նորոգող: Վերջերս սկսաւ նաեւ «քլավիրոններ» եւ «օրկանոններ» շինել:

Մայիսին գնաց Իտալիա

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

ԿԸ ՄՕՏԵՆԱՅ ԻՐ ՎԱԽՃԱՆԻՆ

ՍՈՎԻԵՏԱԿԱՆ ՌԻՃԵՐԸ ՍԿՍԱՆ ՔԱՇՈՒՒՆ - ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՈՒՆԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՉ ԳՏԱՒ ԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԴԱՇԼԻՃ ՊԻՏԻ ԿԱԶՄՈՒԻ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՆՈՐ ԿՈՒՍԱԿ-ՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ՓԱՐԻՋ.— Հունգարիոյ մայրաքաղաքի ձայնասփիւռի կայանը հաղորդեց թէ՛ պաշտպանութեան նախարարութեան յայտարարութեան համաձայն, սովիէթ զինեալ ուժերու հրամանատարութեան հետ զոյացած է համաձայնութիւն մը, որուն հիման վրայ, սովիէթական զորքերը, երէկ կէտորէ ետք ժամը 4ին սկսած են հեռանալ հունգարական մայրաքաղաքէն: Անոնց մեկնումը պիտի լրանայ այսօր կէտորին: Վարչապետ պ. Նակի ալ, ձայնասփիւռէն խօսելով յայտարարեց թէ՛ երկիրը այլևս մէկ կուսակցութեամբ չի կառավարուիր եւ վերադարձած է համազորակցական կառավարութեանը գրութեան: Պ. Նակի բառ թէ՛ նոր կառավարութիւնը պիտի բաղկանայ հանրապետական բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչներէն: 1945ի հունգարական առաջին կառավարութեան նման պիտի ըլլայ:

Պ. Նակիէն վերջ խօսեցաւ

(Նար. Ա. Էջէն)

Ինքնապաշտպանութեան վերջնագիրը եւ իր զորքերը ետ պիտի քաշէ եզրիտական հողէն ու պիտի զարթոցնէ թշնամութիւնները, պայմանաւ որ, Եզրիտոս ալ նոյնը ընէ: Կայսր ակեցուց թէ՛ արտաքին գործոց նախարար տիկին Կոլտա Մէլլեր յայտարարած է որ, Իւրաքանչէր պատերազմ է իր ուժերը Սուէզէն 10 մղոն հեռացնելու:

ԹԷԼ-ԱՎԻԿԸ ՌԻՍԿԱՎՈՒԹԻՅԱՒ

ԼՈՍՏՈՆ.— Ծարդ չհաստատուած տեղեկութեանց համաձայն, եզրիտական սաւառնակներ երէկ ուժարկած են թէլ-Ավիլը: Երեսուցի մէկն ստացուած ուրիշ տեղեկութեանց համաձայն, երէկ, օդանավատերու տեղի ունեցած են Սինայի անապատին վերեւ, զրեթէ մինչեւ Սըւէզի շրջանը: Եզրիտական տեղեկութեանց համաձայն, իւրաքանչէրական վեց սաւառնակներ վար առնուած են: Եզրիտական երկու սաւառնակներ չեն վերադարձած իրենց խարխիւր: Իւրաքանչէր ալ կ'ըսեն թէ՛ «Միկ» տիպի եզրիտական երեք սաւառնակներ վար առած են:

ՋԻՆ. ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄՆԵՐ

ԼՈՍՏՈՆ.— Գիշերուան ընթացքին Դամասկոսէն ստացուած հեռագիրները կը հաղորդեն թէ՛ սուրիական եւ յորդանանեան ուժեր զիրք բռնած են Իւրաքանչէր արեւելեան սահմաններուն վրայ: Իւրաքանչէր ալ շարժիլ սկսած են: Կը կարծուի թէ արաբական այս պետութեանց ուժերն ալ պիտի յարձակին Իւրաքանչէր վրայ, երբ Եզրիտոսի հետ պատերազմական վիճակը պաշտօնականանայ:

տքթ. Ջոյթան Թիլտի, որ Հանրապետութեան նախագահ էր 1948ին, երբ համայնավարները գրաւեցին իշխանութիւնը: Տքթ. Թիլտի յայտարարեց թէ՛ ազատ ընտրութիւններ պիտի կատարուին եւ գիւղացիներուն կողմէն որ վերակազմեն Մանր Հոգատէրերու կուսակցութիւնը:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուտափէշտի ձայնասփիւռի կայանը ժամը 5ին հաղորդեց թէ՛ վարչապետ պ. Նակիի եւ յեղափոխականներու եւ ուսանողներու ներկայացուցիչներու միջեւ բանակցութիւններ սկսած են:

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅՑԸ

Հունգարական Մ.Ռ.Պ. գործակալութիւնը Պուտափէշտի կայանէն հեռարձակեց զեկոյց մը որ կ'ըսէ թէ՛ «Կառավարական կարգ մը որոշումներ, պատճառ եղան որ կիրքերը զրգռուին եւ հազարաւոր մարդոց արին թափի: Այդ որոշումներէն մէկը՝ սովիէթ զորքերը Պուտափէշտ կանչելը եղաւ: Ուրիշ մըն ալ՝ ազատութեան մարտիկներու ղեմ պաշարման վիճակ յայտարարելը: Մեր պատասխանատուութեանց իրապէս զիտակ՝ Պատմութեան առջեւ կը յայտարարենք թէ՛ վարչապետ պ. Իմրէ Նակի ոչ լուր ունէր այդ որոշումներէն եւ ոչ ալ ստորագրած էր զանոնք: Ազգին եւ Պատմութեան հանդէպ պատասխանատու են պ. պ. Անտրա Հեկենտուչ եւ Էրնօ Կերեշ:

ՍՊԱՆԵԱՆՆԵՐՈՒ ԹԻՒՇ

Վիեննայէն ստացուած հեռագիրներու համաձայն, Պուտափէշտէն հոն հասած է հունգար բոխիչ մը, որ յայտարարած է թէ՛ իր կարծիքով, Պուտափէշտի մէջ, սպաննանքներ թիւր կը հասնի 15 հազարի: Բժիշկը Վիեննա գացած է Կարմիր Պաշտպանութեան ղեկավար Կարտաշի Կարմիրի համար զեղ եւ ուստեստեղէն առնելու եւ Պուտափէշտ տանելու:

ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ

Վիեննայէն ստացուած ուրիշ հեռագիրները կը հաղորդեն թէ՛ հունգար յեղափոխականները երէկ, վերջնագիր զրգած են սովիէթական ուժերուն եւ շեշտած որ, եթէ 12 ժամէն չհեռանան Պուտափէշտէն, հունգարական հրետանին եւ օդանավորչութիւնը պիտի յարձակին իրենց վերայ:

ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հունգարական մայրաքաղաքի ձայնասփիւռի կայանի հեռարձակման համաձայն, հունգար բանակը իր շարքերէն հեռացուցած է զազոսի ոստիկանութեան բոլոր սպանները, որոնց կարգին նաեւ բանակի սպայա-

կոյտի պետ գնդապետ Լայոնս Թոտր եւ գիւնաթափած է զանոնք:

Յեղափոխականներու կարծիքով, հունգար զաղտնի ոստիկանութիւնը միակ ուժն է, որ զեռ զօրավիզ կը կանգնի համայնավար վարչաձեւին: Նմանապէս միակ պատասխանատուն է շարունակուող արեւնահեղութեան:

ՍՈՎԻԵՏՆԵՐՈՒ ԿՈՐՈՒՍՆԵՐԸ

Հունգարական ազգիւրները ստացուած տեղեկութեանց համաձայն, Պուտափէշտի կոխուներու ընթացքին սպաննուած են 2500 սովիէթ զինուորներ եւ 5000 զինուորներ ալ վիրաւորուած են:

Հունգարական կորուստները, սպաննուած եւ վիրաւոր, կը հաշուուին 15.000 հոգի, որոնցմէ 3000ը զինեալ ազգայնականներ: Ապստամբութեան օրը, Հոկտեմբեր 23ը, ազգային-սոսնըրչանակուած է Համայնավար կուսակցութեան կողմէ:

ԺՈՂՈՎԻ ՀՐԱԻԵՐ

Հ. Յ. Դ. Երիտ. Միութեան Յիթթի ԱՀԱՐՈՆԵԱՆ ԽՈՒՄԻ ԸՆԿԵՐ ԸՆԿԵՐՈՒՆԵՐԸ ԸՆԳՆ. ԺՈՂՈՎԻ ԿԸ ՀՐԱԻԵՐՈՒՆ ՀԻՆՉԱՐԹԻ, ՆՈՅԵՄԵՐ 1ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 9ԻՆ, ԺԱՆՕԹ ՀԱՄԱՔԱՏԵՂԻՆ: ԲՈՒՐՈՒՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՆԸ ԱՆՀՐԱԾԵՅՈՒ Է:

ԴԱՍԱԾՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հ. Յ. Դ. Երիտ. Միութեան Աթէնքի Գր. Դըյըճեան խումբի ընդամանդամուկները զասախօսական ժողովի կը հրաւիրուին Ուրբաթ օր, Նոյեմբեր 2ին, Երեւանի ժամը 7,30ին, «Ազատ Օր» խմբագրատունը: Կը խնդրուի չբացակայիլ:

Ա Ր Շ Ա Ւ

ՀՄԸՄԻ Աթենահայ Բնութեանաւէրները այս կիրակի պիտի արշաւեն դէպի Պարնիթա: Մեկնում՝ առաւօտեան ժամը 8ին, Գլաւթմոնս հրապարակէն, վարձուած ինքնաշարժով: Ժամրու ծախք՝ երթուղարձ՝ 25 տըրքախմբ: Արձանագրուելու համար մինչեւ Ուրբաթ երեկոյ զիմեյ կըր. Սվայցիանին, Իփոքրաթու 2, հեռաձ. թիւ 612.373:

Սմարայեւ եզր. Լեւոն Վարժապետեան:

ԺՈՂՈՎԻ ՀՐԱԻԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի Աթէնքի մ. ճիւղի բոլոր անդամները ժողովի կը հրաւիրուին Հինգշաբթի Նոյեմբեր 1իկ, ժամը 8ին, կըր. Հրայր Դեթիլեանի բնակարանը:

Օրակարգ.— 1) Պատգամաւորներու զեկուցում, 2) նոր վարչութեան ընտրութիւն: Կը խնդրուի ճշգրտան ըլլալ եւ չբացակայիլ:

ՅԻՔՍԻ ՄԷՉ

Հ. Յ. Դ. «ՕՐ», ՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ (66-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ)

Տեղի կ'ունենայ Կիրակի, 4 Նոյեմբեր, կ. ե. ժամը 5.30ին, Կաթողիկէ Հայոց Յիթթի Հաստատութեան սրահին մէջ: Կը նախագահէ՝ ընկ. Տր. Միքիան Նեուկուան Կը բանաստեղծէ՝ ընկ. ՕճԵԻԿ Զաւարեան Կը գործադրուի օրուան պատշաճ՝ յայտագիր մը.— Կենդանի պատկեր, արտասանութիւն, մեներգ եւ հայկական պար: Սիրով կը հրաւիրուի յարգոյ հասարակութիւնը: ԾԱՆՕԹ.— Հանդէսէն վերջ ընկերահամակրական խնջոյթ՝ Թօփալեան եղբայրներու կեդրոնը, (Լէոֆորոս Սինկրու):

ԱՆՎԻԵՑԻՔ ԱՆՎԱՐԳԵԼՈՐԴՆԵՐ ՆԵՏԵՑԻՆ ՍՈՒԷՉԻ ԾՐՁԱՄԸ

ԼՈՍՏՈՆ.— Գահիրէէն կը հաղորդեն թէ՛ անգլիական օդամուկ երկու սաւառնակներ թռիչք կատարած են Սուէզի շրջանին վերեւ: Եզրիտական հակասաւառնակային հրետանին զարկած է սաւառնակներէն մէկը, որ իջած է Թորդանանի մէջ:

Անգլիական սաւառնակներ անկարգեւորողներ նետած են Սուէզի շրջանին մէջ: Անգլիական մարտանաւերն ալ ուղղուած են դէպի Սուէզ:

ՍՈՎԻԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԼԵՐ ՊԱՇԱՐԵՑԻՆ ՊԵՐԼԻՆԸ

ԼՈՍՏՈՆ.— Գերիլինէն կը հեռագրեն թէ՛ Արեւմտեան Գերիլինի իրագրել թերթերէն մէկուն տեղեկութեանց համաձայն, սովիէթական հրասայլեր եւ զրահապատ ուրիշ կառքեր զիրք բռնած են քաղաքի երկու մասերու սահմաններուն ինչպէս նաեւ սովիէթական զօտի ուրիշ ռազմագիտական կէտերուն վրայ: Նոյն թերթի տեղեկութեանց համաձայն, սովիէթական բանակի մեծ ուժեր միացած են Արեւելեան Գերմանիոյ ժողովրդական ոստիկանութեան ուժերուն հետ եւ կազմ ու պարբաւստ կը սպասեն՝ որեւէ ապստամբական շարժում զօպելու համար:

ՊՈՒԿԱՐԻՈՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԲՆԱԿԱՆՈՆ ԶԷ

Կ. ՊՈՒԿԱՐԻՈՅ.— Թուրք մամուլի ստացած տեղեկութեանց համաձայն, Պուկարիոյ մէջ կացութիւնը բնականոն չէ: Սովիէթայի մէջ, հունգարական ձայնասփիւռի կայանի լուրերը մտիկ ընելը արգիւտուած է: Երկաթուղային կամուրջները հսկողութեան տակ առնուած են եւ նոյնիսկ երեք չորս հոգիի համախմբուած արգիւտուած է:

ՍՈՎԻԵՏ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍԷ ԻՐ ՈՒԾԵՐԸ ԵՏ ՔՍԾԵԼՈՒ ԱՐՐԱՆԵԱԿ ԵՐԿԻՐՆԵՐԸ

ԼՈՍՏՈՆ.— Սովիէթ կառավարութիւնը յայտարարեց թէ՛ տրամադիր է ապստամբ արաւնակ երկիրներէն— Հունգարիա Ռումանիա եւ Բոլոնիա— իր զորքերը եւ խորհրդականները ետ կանչելու մասին խօսակցելու: Աւելցուց թէ՛ իր այս քայլին նըպատակն է յիշեալ երկիրներու ազգային զերիշխանական իրաւունքները բռնաբարելու ամէն կարելիութեան վերջ տալ:

ԱՆՃԵՐԻԱՑԻ ՀԻՆԳ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԴԱՏՈՒՆ ՓԱՐԶԻ ՄԷՉ

ԱՆՃԵՐԻԱ.— Անճերիոյ ազգայնական հինգ ղեկավարները երէկ, օդային զծով փոխադրուեցան Փարիզ, ուր կ'ըսուի թէ՛ պիտի դատուին պատերազմական ատեանին առջեւ: Այս հինգ ղեկավարներու ձեռքաւարման ղեմ իրրեւ հակապատիժ՝ Մարտի մէջ վաթսուն Եւրոպացիներ սպաննուեցան: Ասոնցմէ զատ, 400 ազգականներ փնացուեցան:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ - ՆՈՅԵՄԵՐ 18 ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԳՈՔԻՆԻՈՅ ՄԷՉ

«ԱԶԱՏ ՕՐ», Ի ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՍԱԿԸ

Նճանախօսութիւն եւ ամուսնութիւն	Տրխ. 75
Մահադ (ծաւալին համաձայն)	75—100
Հոգեհանգիստ (մէկ անգամուան համար)	30
Շնորհակալիք, մէկ սիւնակի վրայ, սանքիւր	4
ԳՈՅԳ	8
Չանագան ծանուցումներ, մէկ սիւնակի վրայ, սանքիւր	4
ԳՈՅԳ	8
Սկեղեցակեան ծանուցումներ մէկ	3
Առեւտ. ծանուցումներ մէկ	3
ԳՈՅԳ	6
Նուիրատուութիւններէ, մինչեւ 50 տրախմի համար, 5 տրխ., աւելի մեծ գումարներէ 10% կը գանձուի Գուրաուէն:	
ԾԱՆՕԹ.— Հեռաձայնով ծանուցումներ չեն ընդունուիր: Ծանուցումներու փոխարժեքը, առանց բացառութեան, կանխիկ է:	